

Կեսարացի Գրիգորն որ ժամանակ մի ապստամբ եկաց ի նմանե, վասն իւր խստապարանոց եւ գոռոզ բարուցն, եւ ապա հնազանդեցաւ, եւ հառ գաւազան ի նմանե» (Իւրանադէ, էջ 368):

Եթէ Դարանազցիի այս տեղեկութիւնը վաւերական համարենք, Գրիգոր վրդ. Կեսարացի, որ 1585ին կամ անկէ քիչ յետոյ, այսինքն Սրապիոն վարդապետի ուսուցանելու իրաւունք եւ վարդապետական գաւազան ստանալէն քիչ յետոյ պէտք էր անոր աշակերտած ըլլար, քիչ ընդհատուժով մը, այսինքն պահ մը անկէ հեռանալով, մինչեւ 1595, պէտք է անոր քովը մնացած, այսինքն մօտաւորապէս տասը տարուան աշակերտութեան շրջան մը բոլորած ըլլայ Ամիգի մէջ, «առ ոտս Սրապիոն վարդապետի», ինչպէս կ'ըսէին այն ատեն:

Այս տասնամեակի (1585–1595) ընթացքին է որ հաւանօրէն ստացած է իր կրօնաւորական կարգը Ամիգի մէջ, ուր կը ստանայ նաեւ գաւազան Սրապիոնէն, 1595ին, ըստ Յակոբ քհնյ. Կեսարացիի:

Ասով կը լրանար ըստ Հայ Եկեղեցւոյ կարգերուն եւ կանոններուն իր նախապատրաստութիւնը եւ կը մտնէր կեանքի ապարէզ: